ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշսթի 1

№ 3656-Ա «24» սեպտեմբերի 2024թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «ԱՎՐՈՐԱ ՍԹԱՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 30.04.2024թ. թվականին կնքված «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-24/59-5» ծածկագրով ծառայություն-ների մատուցման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը /այսուհետ՝ ծառայություն/՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով»:

Ընկերությունը խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները, չի՛ կազմակերպել և չի՛ իրականացրել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով պահանջված սպորտային միջոցառումը /«Երևան մարաթոն» մրցաշար/, որի մատուցման ժամկետ էր սահմանված մինչև սույն թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Միաժամանակ՝ համաձայն Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված՝ մրցաշարի հետ կապված բոլոր մանրամասները պատվիրատուի հետ համաձայնեցնելու վերաբերյալ դրույթի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչությունը /այսուհետ՝ Վարչություն/ տեղեկացրել է, որ «Երևան մարաթոն» մրցաշարն անցկացվելու է ս/թ սեպտեմբերի 15-ին: Վարչությունը Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների շրջանակներում 29.08.2024թ. հ.46.1/143210-24, 04.09.2024թ. հ.46.1/146528-24 և 10.09.2024թ. հ.46.1/149373-24 գրություններով, ինչպես նաև star.avrora@inbox.ru էլեկտրոնային հասցեով Ընկերությանը տեղեկացրել է «Երևան մարաթոն» մրցաշարի անցկացման ժամկետների վերաբերյալ և խնդրել, որպեսզի Ընկերությունը ներկայացնի մրցաշարի անցկացման հետ կապված բոլոր համաձայնեցումները՝ ներառյալ միջոցառման շրջանակներում արտերկրից ժամանող հյուրերի դիմավորման, հյուրանոցի տեղափոխման և այլ ծառայությունների մատուցման մասով, որը համաձայն տեխնիկական բնութագրի պետք է

իրականացնի Ընկերությունը, սակայն վերոնշյալ գրություններին Ընկերության կողմից որևէ արձագանք չի եղել և արդյունքում նշված ժամկետում չի մատուցվել ծառայությունը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագրիը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է «Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ»:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջով՝ միակողմանի /ամբողջությամբ/ լուծել է 30.04.2024 թվականին կնքված «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-24/59-5» ծածկագրով պայմանագիրը:

30.04.2024 թվականին կնքված «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-24/59-5» ծածկագրով պայմանագրի միակողմանի /ամբողջությամբ/ լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի սեպտեմբերի 17-ին և Պայմանագիրը սեպտեմբերի 18-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «ԱՎՐՈՐԱ ՍԹԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ